

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտչության մեխանիզմի մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

ձգտելով ստեղծել մաքսային և հարկային վճարների վճարումից խուսափելու տարբեր սխեմաների օգտագործումը բացառող պայմաններ,

նպատակ ունենալով հաստատելու ապրանքների շրջանառության օրինականությունը դրանք մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք տեղափոխելիս,

ցանկանալով ապահովել ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների նկատմամբ հսկողությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը.

անձ՝ ֆիզիկական անձ, այդ թվում՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն.

հետազոտչության մեխանիզմ՝ հետազոտչության ազգային համակարգերից տեղեկությունների փոխանակման հիման վրա գործող և ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողության նպատակներով հետազոտչությունն ապահովող համակարգ.

հետազոտչության ազգային համակարգ՝ անդամ պետության տեղեկատվական համակարգ, որն ապահովում է հետազոտչության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունների հավաքումը, հաշվառումը և պահպանումը.

ապրանքների շրջանառություն՝ հետազոտչության ենթակա ապրանքների բաց թողում՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգին համապատասխան, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում հետազոտչության ենթակա ապրանքների իրացում, մի անդամ պետության տարածքից այլ

անդամ պետության տարածք դրանց տեղափոխում՝ իրացման հետ կապված և սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում.

հետազոտելիություն՝ սույն Համաձայնագրի իրագործման նպատակներով հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների հաշվառման կազմակերպում՝ հետազոտելիության ազգային համակարգերի օգտագործմամբ.

ապրանքների իրացում՝ ապրանքների տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի փոխանցում մի անձի կողմից այլ անձի՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված ցանկացած եղանակով.

մանրաձախ առևտուր՝ առևտրային գործունեության տեսակ, որը կապված է ապրանքներ ձեռք բերելու և վաճառելու հետ՝ դրանք անձնական, ընտանեկան, կենցաղային նպատակներով և ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող այլ նպատակներով օգտագործելու համար.

ուղեկցող փաստաթուղթ՝ հաշիվ-ապրանքագիր կամ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթուղթ, որից վերցված տեղեկությունները ներառվում են հետազոտելիության ազգային համակարգում.

հետազոտելիության ենթակա ապրանքներ՝ ապրանքներ, որոնց նկատմամբ, սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, հետազոտելիություն է իրականացվում:

Սույն Համաձայնագրում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով և Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 2

1. Սույն Համաձայնագիրը սահմանում է հետազոտելիության մեխանիզմի գործունեության կարգը:

2. Սույն Համաձայնագրին համապատասխան՝ հետազոտելիությունն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկում (այսուհետ, համապատասխանաբար՝ Հանձնաժողով, ցանկ) ընդգրկված, Միության մաքսային տարածք ներմուծված հետևյալ ապրանքների նկատմամբ.

1) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ,

2) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքներ, որոնք առգրավվել են կամ այլ ձևով դարձել են պետության սեփականություն (եկամուտ),

3) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքներ, որոնք դատարանի որոշմամբ բռնագրավվել են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին,

4) Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված և այդ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց կողմից սահմանված ժամկետներում չպահանջված ապրանքներ:

3. Այն հանգամանքները, որոնց ի հայտ գալու դեպքում սույն հոդվածի 2-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված ապրանքները ենթակա են հետազոտելիության, որոշվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

4. Ցանկը պետք է պարունակի ապրանքի անվանումը, 10 նիշ ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան, ինչպես նաև հետազոտելիություն իրականացնելու նպատակներով օգտագործվող ապրանքի քանակական չափման միավորը (այսուհետ՝ ապրանքի քանակական չափման միավոր):

Ցանկը հաստատելու կամ դրանում փոփոխություններ (բացի ապրանքը ցանկից հանելու հետ կապված փոփոխություններից) կատարելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 90 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

5. Սույն Համաձայնագրի գործողությունը չի տարածվում՝

1) Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների կամ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած), (վերամշակման արդյունքներ, թափոններ և մնացորդներ) և «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վրա.

2) «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների, «Ազատ

մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից և Միության ապրանքներից պատրաստված (ստացված) և «Բաց թողնում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վրա.

3) «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների, «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից և Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների և «Բաց թողնում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վրա.

4) այն ապրանքների նկատմամբ, որոնց ներմուծումը, ձեռքբերումը, փոխանցումը կամ օտարումը ֆիզիկական անձանց կողմից իրականացվում է անձնական, ընտանեկան, ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող այլ նպատակներով.

5) այն ապրանքների նկատմամբ, որոնք նախատեսված են պաշտոնական օգտագործման համար Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպություններում պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից, որոնք օգտվում են արտոնություններից և (կամ) անձեռնմխելիությունից` համաձայն երրորդ պետությունների հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերի, և անդամ պետությունների և միջազգային կազմակերպությունների, դրանց ներկայացուցչությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն, որոնցով արտոնություններ և անձեռնմխելիություն է տրվում անդամ պետության տարածքում` այդ անդամ պետության միջազգային պայմանագրերի համաձայն:

6. Հետազոծելիություն չի իրականացվում`

1) մանրածախ առևտրում իրացված` հետազոծելիության ենթակա ապրանքների նկատմամբ.

2) հետազոծելիության ենթակա այն ապրանքների նկատմամբ, որոնց մասին տեղեկությունները պարունակում են, անդամ պետությունների օրենսդրության համապատասխան, պետական գաղտնիքի (պետական գաղտնիքների) շարքին դասվող տեղեկատվություն.

3) հետազոծելիության ենթակա ապրանքների նկատմամբ` Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել անձինք և (կամ) այն դեպքերը, երբ անձինք իրավունք ունեն հետազոտելիության ազգային համակարգում չներառելու հետազոտելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկություններ՝ այդպիսի ապրանքներն այդ անձանց և (կամ) դեպքերը սահմանող անդամ պետության տարածքում իրացնելու և (կամ) օգտագործելու պայմանով:

Հոդված 3

1. Հետազոտելիության մեխանիզմի շրջանակներում անդամ պետություններն ապահովում են հետազոտելիության ազգային համակարգերից տեղեկությունների փոխանակումը՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

2. Հետազոտելիության ազգային համակարգերում պարունակվող՝ հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված՝ տարբեր անդամ պետությունների անձանց միջև կատարվող գործառնությունների մասին տեղեկությունների փոխանակումը կատարվում է կանոնավոր՝ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան:

Հետազոտելիության ազգային համակարգերում պարունակվող՝ հետազոտելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված այն գործառնությունների մասին տեղեկությունների փոխանակումը, որոնք նախորդում են մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք այդ ապրանքների տեղափոխմանը, կատարվում է սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան:

3. Հետազոտելիության ազգային համակարգերից տեղեկությունների փոխանակումն ապահովվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

Հոդված 4

1. Հետազոտելիության ազգային համակարգերի ստեղծումն ու դրանց գործունեության ապահովումն անդամ պետությունների կողմից իրականացվում են սույն Համաձայնագրին և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ էլեկտրոնային տեսքով, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ:

2. Հետազոտելիության ազգային համակարգերում ներառվում են հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ

կապված գործառնությունների մասին տեղեկություններ:

3. Ցանկը հաստատելու (ցանկում փոփոխություններ կատարելու) մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Միության մաքսային տարածքում փաստացի գտնվող՝ հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունները ենթակա են հետազոտելիության ազգային համակարգերում ներառման՝ Հանձնաժողովի նշված որոշմամբ սահմանվող ժամկետներում և կարգով:

4. Մեկ անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք հետազոտելիության ենթակա ապրանքների՝ այդ ապրանքների իրացման հետ կապ չունեցող տեղափոխման մասին տեղեկությունները հետազոտելիության ազգային համակարգում ներառելու դեպքերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կողմից կարող է սահմանվել նշված տեղեկությունները հետազոտելիության ազգային համակարգում ներառելու կարգ:

5. Հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունները ներառվում են հետազոտելիության ազգային համակարգում առնվազն այն ծավալով, որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրի 8-րդ և 9-րդ հոդվածներին համապատասխան հետազոտելիության ազգային համակարգերից տեղեկությունների փոխանակման համար:

6. Հետազոտելիության ազգային համակարգը պետք է ապահովի՝

1) հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունների լրիվությունը.

2) հետազոտելիության ենթակա ապրանքների հաշվառումը՝ ցանկով նախատեսված չափման քանակական միավորների օգտագործմամբ.

3) ուղեկցող փաստաթղթի և այն փաստաթղթի միջև փոխկապվածությունը, որի հիման վրա ապրանքների մասին տեղեկությունները ներառվել են հետազոտելիության ազգային համակարգում (ապրանքների հայտարարագիր, մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմում, սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթեր).

4) հաջորդ ուղեկցող փաստաթղթի փոխկապվածությունը նախորդ ուղեկցող փաստաթղթի հետ.

5) հետազոտելիության ազգային համակարգում պարունակվող տեղեկությունների

ամբողջականությունը.

6) հետազոծելիության ենթակա ապրանքների (ապրանքների խմբաքանակի) փաստաթղթային նույնականացումը անդամ պետությունների օրենսդրության համապատասխան դրանց շրջանառության ժամանակ:

Հոդված 5

1. Հետազոծելիության ազգային համակարգում ներառվում են տեղեկություններ.

1) ապրանքների հայտարարագրից, ապրանքների հայտարարագրերի ճշգրտումներից, մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումից (սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների մասով).

2) այն փաստաթղթերից, որոնց հիման վրա սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված՝ հետազոծելիության ենթակա ապրանքները, անդամ պետությունների օրենսդրության համապատասխան, ներառվում են հետազոծելիության ազգային համակարգում.

3) ուղեկցող փաստաթղթերից, այդ թվում՝ ճշգրտված ուղեկցող փաստաթղթերից.

4) հետազոծելիության վերսկսումը հաստատող փաստաթղթերից՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան.

5) անդամ պետությունների օրենսդրությամբ և (կամ) Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսված այլ փաստաթղթերից.

6) այլ անդամ պետությունների հետազոծելիության ազգային համակարգերից:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսվել հետազոծելիության ազգային համակարգում սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերի նույնականացման հատկանիշների կիրառման մեխանիզմների սահմանման և էլեկտրոնային ձևով ապրանքների կարգավիճակի փոփոխման հնարավորություն՝ առանց նշված դեպքերի համար փաստաթղթերի առանձին տեսակներ հաստատելու:

3. Սույն հոդվածի 1-ին կետի 1-5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերից տեղեկությունները հետազոծելիության ազգային համակարգում ներառվում են այն ժամկետներում, որոնք սահմանվում են՝

1) Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերում

նշված, փաստաթղթերից տեղեկությունների առնչությամբ.

2) անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերում նշված, փաստաթղթերից տեղեկությունների առնչությամբ.

3) անդամ պետությունների օրենսդրությամբ և (կամ) Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով՝ սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված, փաստաթղթերից տեղեկությունների առնչությամբ:

4. Այլ անդամ պետությունների հետազոտելիության ազգային համակարգերից տեղեկություններն անդամ պետության հետազոտելիության ազգային համակարգում ներառվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող ժամկետներում:

5. Տեղեկությունները հետազոտելիության ազգային համակարգ մուտքագրելու համար պատասխանատու անձինք սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

6. Հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունները հետազոտելիության ազգային համակարգերում պահպանելու ժամկետը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

7. Սույն Համաձայնագրին համապատասխան հետազոտելիությունն ապահովելու նպատակներով օգտագործվում են տեղեկություններ, այդ թվում՝ այն ապրանքների հայտարարագրերից, որոնց փոխանակումն իրականացվում է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան:

Հոդված 6

1. Հետազոտելիությունը դադարում է հետազոտելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված վերջին գործառնության մասին տեղեկությունները հետազոտելիության ազգային համակարգում ներառելու օրվանից 5 տարին լրանալուց հետո, իսկ եթե այդպիսի գործառնություններ չեն իրականացվել, ապա հետազոտելիության ազգային համակարգում այն տեղեկությունների մուտքագրման օրվանից 5 տարին լրանալուց հետո, որոնք մուտքագրվել են ապրանքների այն հայտարարագրից կամ ապրանքների հայտարարագիրը ներկայացնելուց առաջ ապրանքների բացթողման մասին դիմումից, որոնցով այդ ապրանքները ձևակերպվել էին «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, կամ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթից, կամ հետազոտելիության ենթակա ապրանքների

առանձին կատեգորիաների առնչությամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ՝ պակաս տևողությամբ ժամկետի լրանալուց հետո:

2. Մինչև սույն հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետի լրանալը, հետազոտությունը դադարում է, եթե հետազոտության ենթակա ապրանքները հանվել են ցանկից:

3. Հանձնաժողովի կողմից կարող են սահմանվել այն դեպքերը, երբ հետազոտությունը դադարում է մինչև սույն հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետը լրանալը, և հետազոտության դադարման ժամկետները տվյալ դեպքերում:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել հետազոտության դադարման կարգ և ժամկետներ մինչև սույն հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետը լրանալը՝ հետևյալ դեպքերում.

1) հետազոտության ենթակա ապրանքների օգտագործումը արտադրության մեջ, այդ թվում՝ վերամշակման մեջ, անդամ պետության տարածքում,

2) հետազոտության ենթակա ապրանքների թաղում, վնասակերծում, ուտիլիզացում կամ ոչնչացում՝ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան այլ եղանակով,

3) հետազոտության ենթակա ապրանքների ոչնչացում և (կամ) անվերադարձ կորուստ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,

4) հետազոտության ենթակա ապրանքների փոխանցում՝ մանրածախ առևտրի նպատակով, կամ մանրածախ առևտրում հետազոտության ենթակա ապրանքների իրացում,

5) Միության մաքսային տարածքից հետազոտության ենթակա ապրանքների փաստացի արտահանում՝ «Արտահանում» մաքսային ընթացակարգին կամ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան:

5. Սույն հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետը լրանալուց հետո կամ հետազոտության ենթակա ապրանքները մանրածախ առևտրի նպատակով փոխանցելու դեպքում հետազոտության դադարումից հետո և (կամ) սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում հետազոտության

ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված գործառնություններ կատարելու դեպքում հետագծելիությունը վերսկսվում է:

Հոդված 7

1. Հետագծելիության ենթակա ապրանքների շրջանառություն իրականացնող անձինք պարտավոր են.

1) ձևակերպել ուղեկցող փաստաթղթերը էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ այն դեպքի, երբ էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ձևակերպումն անհնար է՝ տեղեկատվական համակարգերի անսարքության պատճառով, որն առաջացել է տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցական ցանցերի և «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի) աշխատանքի ընդհատումների, էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքերում.

2) ներկայացնել հետագծելիության ազգային համակարգում ներառման ենթակա՝ ամբողջական և հավաստի տեղեկություններ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հետագծելիության ենթակա ապրանքների շրջանառություն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանվում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց շարքին չեն դասվում այն անձինք, որոնք փոխադրման (տրանսպորտային առաքման) պայմանագրի հիման վրա, իրականացնում են հետագծելիության ենթակա ապրանքների փոխադրում:

Հոդված 8

1. Այն անդամ պետությունը, որի տարածքից տեղափոխվում են հետագծելիության ենթակա ապրանքները, ապահովում է իր հետագծելիության ազգային համակարգում պարունակվող՝ հետագծելիության ենթակա ապրանքների և այդ

ապրանքների շրջանառության հետ կապված՝ տարբեր անդամ պետությունների անձանց միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների ուղարկումն այն անդամ պետություն, որի տարածք են տեղափոխվում այդ ապրանքները, և՛ այն անդամ պետություններ, որոնց տարածքներով ենթադրվում է իրականացնել հետազոտության ենթակա ապրանքների փոխադրում, ինչպես նաև՝ այլ անդամ պետություններ, եթե դա նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից տեղափոխվում են հետազոտության ենթակա ապրանքները:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկություններն ուղարկվում են այդ տեղեկություններն այն անդամ պետության հետազոտության ազգային համակարգում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, որի տարածքից տեղափոխվում են հետազոտության ենթակա ապրանքները:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկություններն ուղարկվում են էլեկտրոնային տեսքով, հետևյալ կազմով (եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի կողմից).

1) այն անդամ պետության ծածկագիրը, որի տարածքից տեղափոխվում են հետազոտության ենթակա ապրանքները.

2) տեղեկություններ այն անձի մասին, որն այլ անձի է փոխանցում ապրանքների տիրապետման, օգտագործման և տնօրինման իր իրավունքը, կամ՝ այն անձի մասին, որն իրականացնում է այդ ապրանքների իրացման հետ կապ չունեցող՝ այդ ապրանքների տեղափոխում մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք՝ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան.

անվանում կամ ազգանուն, անուն, հայրանուն (առկայության դեպքում).

նույնականացման ծածկագիրը (համարը)՝ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, Բելառուսի Հանրապետության դեպքում՝ վճարողի հաշվառման համարը, Ղազախստանի Հանրապետության դեպքում՝ անհատական նույնականացման համարը կամ բիզնես-նույնականացման համարը, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Ղաշնության դեպքում՝ հարկ վճարողի նույնականացման համարը.

3) այն անդամ պետության ծածկագիրը, որի տարածք են տեղափոխվում հետազոտության ենթակա ապրանքները.

4) տեղեկություններ այն անձի մասին, որին սույն կետի 2-րդ ենթակետում նշված

անձի կողմից փոխանցվել է ապրանքների տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը.

անվանում կամ ազգանուն, անուն, հայրանուն (առկայության դեպքում).

գտնվելու վայրը (բնակության վայրը).

նույնականացման ծածկագիրը (համարը)՝ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, Բելառուսի Հանրապետության դեպքում՝ վճարողի հաշվառման համարը, Ղազախստանի Հանրապետության դեպքում՝ անհատական նույնականացման համարը կամ բիզնես-նույնականացման համարը, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դեպքում՝ հարկ վճարողի նույնականացման համարը.

5) ուղեկցող փաստաթղթի գրանցման համարը և ամսաթիվը.

6) հետազոտության ենթակա ապրանքի հերթական համարը՝ ուղեկցող փաստաթղթին համապատասխան.

7) հետազոտության ենթակա ապրանքի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթին համապատասխան.

8) այն չափման միավորը, որը գործածվում է ուղեկցող փաստաթղթում հետազոտության ենթակա ապրանքի համար (կարող է չուղարկվել, եթե այդ չափման միավորը համընկնում է ապրանքի այն չափման միավորի հետ, որը գործածվում է հետազոտության իրականացման նպատակներով՝ ցանկին համապատասխան).

9) ուղեկցող փաստաթղթում նշված հետազոտության ենթակա ապրանքի քանակությունը՝ այն չափման միավորով, որը գործածվում է ուղեկցող փաստաթղթում (կարող է չուղարկվել, եթե ապրանքի քանակությունը նշված է ապրանքի քանակական չափման միավորով՝ ցանկին համապատասխան).

10) հետազոտության ենթակա ապրանքի չափման՝ հետազոտության իրականացման նպատակներով գործածվող քանակական միավորը՝ ցանկին համապատասխան.

11) հետազոտության ենթակա ապրանքի՝ ուղեկցող փաստաթղթում նշված քանակը՝ ապրանքի չափման գործածվող քանակական միավորով՝ ցանկին համապատասխան.

12) ապրանքների հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան՝ հետազոտության ենթակա ապրանքները ձևակերպվել են «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով (հետազոտության ենթակա այն

ապրանքների համար, որոնք նշված են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում).

13) հետազոտելիության ենթակա ապրանքի հերթական համարը՝ ապրանքների հայտարարագրին համապատասխան (հետազոտելիության ենթակա այն ապրանքների համար, որոնք նշված են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում).

14) մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ ապրանքների բաց թողման մասին դիմումից տեղեկությունները, որին համապատասխան՝ հետազոտելիության ենթակա ապրանքները ձևակերպվել են «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով (հետազոտելիության ենթակա այն ապրանքների համար, որոնք նշված են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում, և եթե ուղեկցող փաստաթուղթը փոխկապակցված է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին այդ դիմումի հետ).

գրանցման համարը.

հետազոտելիության ենթակա ապրանքի հերթական համարը.

ուղարկող երկիրը.

նշանակման երկիրը.

արժույթը.

հետազոտելիության ենթակա ապրանքի արժեքը.

հետազոտելիության ենթակա ապրանքի անվանումը և նկարագրությունը.

հետազոտելիության ենթակա ապրանքի ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան, որը նշված է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումի մեջ.

հետազոտելիության ենթակա ապրանքի չափման միավորը, որը նշված է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բաց թողման մասին դիմումի մեջ (կարող է չուղարկվել, եթե այդ չափման միավորը համընկնում է ապրանքի չափման քանակական միավորի հետ՝ ցանկին համապատասխան).

հետազոտելիության ենթակա ապրանքի քանակությունը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բաց թողման մասին դիմումի մեջ նշված չափման միավորներով (կարող է չուղարկվել, եթե ապրանքի քանակությունը նշված է ապրանքի քանակական չափման միավորով՝ ցանկին համապատասխան).

հետազոծելիության ենթակա ապրանքի չափման՝ հետազոծելիության իրականացման նպատակներով գործածվող քանակական միավորը՝ ցանկին համապատասխան.

հետազոծելիության ենթակա ապրանքի քանակը՝ ապրանքի չափման՝ քանակական միավորով ցանկին համապատասխան .

հետազոծելիության ենթակա ապրանքի համաքաշը.

հետազոծելիության ենթակա ապրանքի ծագման երկիրը.

15) այն փաստաթղթի անվանումը, գրանցման համարը և ամսաթիվը, որի հիման վրա, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված ապրանքները ներառված են հետազոծելիության ազգային համակարգում.

16) հետազոծելիության ենթակա ապրանքի նշանակման (առաքման, բեռնաթափման) կետերի մասին տեղեկություններ՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան (առկայության դեպքում).

17) գույքագրման ակտի (առկայության դեպքում) ամսաթիվը և գրանցման համարը.

18) հետազոծելիության ենթակա ապրանքի հերթական համարը՝ գույքագրման ակտին համապատասխան (առկայության դեպքում).

19) հետազոծելիության ենթակա ապրանքային միավորի վրա զետեղված նույնականացման համարը (հետազոծելիության ազգային համակարգում դրա առկայության դեպքում).

20) հետազոծելիության ենթակա ապրանքի ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձանց շարքին չեն դասվում այն անձինք, որոնք փոխադրման (տրանսպորտային առաքման) պայմանագրի հիման վրա իրականացնում են հետազոծելիության ենթակա ապրանքների փոխադրում:

Հոդված 9

1. Այն անդամ պետությունը, որի տարածքից տեղափոխվում են (տեղափոխվել են) հետազոծելիության ենթակա ապրանքները, այն անդամ պետության լիազորված մարմնի հարցման հիման վրա, որի տարածք են տեղափոխվում (տեղափոխվել) այդ ապրանքները, ապահովում է այդ անդամ պետության հետազոծելիության ազգային

համակարգում առկա՝ հետազոտելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված՝ մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք այդպիսի ապրանքների տեղափոխմանը նախորդող գործառնությունների մասին տեղեկությունների տրամադրումը:

2. Հետազոտելիության ազգային համակարգերում պարունակվող՝ հետազոտելիության ենթակա ապրանքների շրջանառության հետ կապված՝ մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք ապրանքների տեղափոխմանը նախորդող գործառնությունների մասին տեղեկությունների տրամադրման մասին հարցումների ուղարկման և կատարման կարգը, ինչպես նաև տրամադրվող տեղեկությունների կազմը և դրանց տրամադրման ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հարցված տեղեկությունները տրամադրվում են հետազոտելիության ազգային համակարգերում տեղեկությունների պահպանման՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող ժամկետը չգերազանցող ժամանակահատվածի համար:

Հոդված 10

1. Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով՝ ապրանքների հայտարարագրում և ապրանքների հայտարարագիրը ներկայացնելուց առաջ ապրանքի բաց թողման մասին դիմումի մեջ, որոնց համապատասխան՝ հետազոտելիության ենթակա ապրանքները ձևակերպվում են «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերում, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերում պետք է նշվեն տեղեկություններ ցանկով նապատեսված՝ ապրանքների չափման քանակական միավորների և հետազոտելիության ենթակա ապրանքների՝ այդ միավորներով արտահայտված քանակության մասին: Այդ տեղեկությունները նշվում են ապրանքների հայտարարագրերում և մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բաց թողման մասին դիմումի մեջ՝ Հանձնաժողովի կողմից ապրանքների հայտարարագրի և մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բաց թողման մասին դիմումի լրացման համար սահմանված կարգով, իսկ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերում և

ուղեկցող փաստաթղթերում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով:

2. Հանձնաժողովի կողմից կարող են սահմանվել հետազոտության և (կամ) հետազոտության մեխանիզմի գործունեության առանձնահատկություններ այն դեպքերի համար, երբ հետազոտության ենթակա ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում էր Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով և (կամ) Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված առանձնահատկություններով, կամ այդ ապրանքները բաց էին թողնվում մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան:

3. Հետազոտության ենթակա ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից այլ անդամ պետության տարածք տեղափոխելիս տարանցիկ հայտարարագրում նշվում են ուղեկցող փաստաթղթի գրանցման համարը և ամսաթիվը:

Այդ ապրանքների մասին տեղեկությունները սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի 3-րդ կետում նշված կազմով ներառվում են Հայաստանի Հանրապետության հետազոտության ազգային համակարգում մինչև Հայաստանի Հանրապետության տարածքից այլ անդամ պետության տարածք դրանց տեղափոխման պահը և ուղարկվում են այլ անդամ պետությունների հետազոտության ազգային համակարգեր՝ սույն Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով:

Ուղեկցող փաստաթղթի գրանցման համարի և ամսաթվի մասին տեղեկությունները նշվում են տարանցման հայտարարագրում՝ տարանցման հայտարարագիրը լրացնելու համար Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Հոդված 11

1. Մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք հետազոտության ենթակա ապրանքների տեղափոխում չի թույլատրվում հետազոտության ազգային համակարգում այդ տեղափոխման հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունների բացակայության դեպքում՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ տեղեկությունները հետազոտության ազգային համակարգում բացակայում են՝ տեղեկատվական համակարգերի անսարքության պատճառով, որն առաջացել է տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցական

ցանցերի և «Ինտերնետ» տեղեկատվական--հեռահաղորդակցական ցանցի) աշխատանքի ընդհատումների, էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքերում.

2. Հանձնաժողովի կողմից սահմանվում է մի անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք հետազոտելիության ենթակա ապրանքների տեղափոխման իրավաչափության հաստատման կարգ՝ տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցական ցանցերի և «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի) աշխատանքի ընդհատումների կամ էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով տեղեկատվական համակարգերի անսարքությունների պատճառով հետազոտելիության ազգային համակարգում այդպիսի տեղափոխման հետ կապված գործառնությունների մասին տեղեկությունների բացակայության դեպքում, ինչպես նաև, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, Հանձնաժողովի կողմից սահմանված այլ դեպքերում, և անդամ պետությունների լիազորված մարմիններին տեղեկատվական համակարգերի անսարքության մասին տեղեկացման կարգ:

Տեղեկատվական համակարգերի անսարքության մասին անձանց տեղեկացման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Անդամ պետություններն ապահովում են հետազոտելիության ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն՝ իրենց օրենսդրության համապատասխան:

Հոդված 12

1. Հետազոտելիության ենթակա ապրանքների և այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների մասին այն տեղեկությունները, որոնք, սույն Համաձայնագրին համապատասխան, ներառված են հետազոտելիության ազգային համակարգերում, անդամ պետությունների օրենսդրության համապատասխան սահմանված՝ անդամ պետությունների պետական իշխանության մարմինների կողմից օգտագործվում են միայն հետազոտելիության նպատակներով՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ նշված տեղեկությունները անդամ պետությունների պետական իշխանության մարմինների կողմից ոչ իրավաչափ տարածվելուց պաշտպանելու համար և ապահովում են այդ տեղեկություններին հասանելիություն ունեցող անձանց շրջանակի սահմանափակումը,

ինչպես նաև դրանց պաշտպանությունը՝ իրենց օրենսդրությանը համապատասխան:

2. Անդամ պետությունների պետական իշխանության մարմինները և (կամ) կազմակերպությունները, որոնք սահմանվել են սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ինչպես նաև անդամ պետությունների՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված պետական իշխանության մարմինները, որոնք, սույն Համաձայնագրին համապատասխան, հասանելիություն են ստացել հետազոտելիության ազգային համակարգերում ներառված տեղեկություններին, դրանց պաշտոնատար անձինք (աշխատողները) իրավունք չունեն հրապարակելու, անձնական նպատակներով օգտագործելու կամ այլ անձանց (այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմիններին) փոխանցելու առևտրային, հարկային, բանկային և անդամ պետությունների օրենսդրությամբ պաշտպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկատվություն, ինչպես նաև այլ կոնֆիդենցիալ տեղեկատվություն՝ բացառությամբ, սույն Համաձայնագրին համապատասխան, այդ տեղեկատվության փոխանցման, և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Հոդված 13

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում անդամ պետությունների կառավարությունները սահմանում են.

1) անդամ պետությունների պետական իշխանության այն մարմինը, որը լիազորված է ապահովելու հետազոտելիության մեխանիզմի իրագործման համակարգում՝ սույն Համաձայնագրին համապատասխան.

2) անդամ պետության պետական իշխանության այն մարմինը կամ կազմակերպությունը, որը լիազորված է ապահովելու հետազոտելիության ազգային համակարգում ներառվող տեղեկությունների հավաքումը, հաշվառումը, պահպանումն ու մշակումը և (կամ) հետազոտելիության մեխանիզմի իրագործումը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված պետական իշխանության մարմինների և (կամ) կազմակերպությունների սահմանման օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում անդամ պետությունները դրանց մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

3. Անդամ պետության պետական իշխանության մարմինը, որը նշված է սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում, իր սահմանման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում Հանձնաժողովին տեղեկացնում է ուղեկցող փաստաթղթի անվանման մասին, որից տեղեկությունները ներառվում են հետազոտելիության ազգային համակարգում:

4. Հանձնաժողովը, սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան տեղեկատվությունն ստանալուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում, դրա մասին տեղեկացնում է անդամ պետություններին:

Հոդված 14

1. Հետազոտության մեխանիզմի ներդրումն իրականացվում է փուլ առ փուլ:

2. Առաջին փուլում հետազոտության մեխանիզմը գործում է պիլոտային ծրագրի շրջանակներում:

3. Անդամ պետությունները պարտավորվում են հետազոտության մեխանիզմի ներդրման պիլոտային ծրագրի իրագործումն սկսել սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիսը լրանալուց հետո, բայց ոչ շուտ, քան նշված օրվան հաջորդող ամսվա 1-ին օրը:

Հետազոտության մեխանիզմի ներդրման պիլոտային նախագծի իրագործման ժամկետները և պայմանները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

4. Պիլոտային ծրագրի իրագործումն սկսելու օրվանից անդամ պետություններն ապահովում են հետազոտության ազգային համակարգերի գործունեությունը պիլոտային ծրագրի շրջանակներում՝ հետազոտության մեխանիզմի իրագործման համար անհրաժեշտ ծավալով:

5. Մշտական հիմունքներով հետազոտության մեխանիզմն սկսում է գործել պիլոտային ծրագրի արդյունքներով ընդունված՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշման համապատասխան:

Հետազոտության մեխանիզմի՝ մշտական հիմունքներով գործունեության սկսման մասին Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ոչ շուտ, քան դրա պաշտոնական հրապարակման օրվանից 90 օրացուցային օրը լրանալուց հետո:

Հոդված 15

1. Հանձնաժողովը ցանկացած անդամ պետության դիմումով 10 օրացուցային օրվա ընթացքում իրականացնում է անդամ պետությունների կողմից հետազոտության մեխանիզմի գործունեության ապահովման նկատմամբ վերահսկողություն և ծանուցում է անդամ պետություններին այդ վերահսկողության արդյունքների մասին:

Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների կողմից հետազոտության մեխանիզմի գործունեության ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացման

և անդամ պետություններին այդ վերահսկողության արդյունքների մասին ծանուցման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

2. Եթե Հանձնաժողովի կողմից նման հսկողության արդյունքներով պարզվել է, որ անդամ պետություններից որևէ մեկը չի ապահովում հետազոտության մեխանիզմի գործունեությունը, ապա մյուս անդամ պետություններն իրավունք ունեն կասեցնելու այդ անդամ պետությանը սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան տեղեկությունների կանոնավոր ուղարկումն ու սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան տեղեկությունների տրամադրումը:

3. Սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան տեղեկությունների կանոնավոր ուղարկումը և սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան տեղեկությունների տրամադրումն այն անդամ պետությանը, որը չի ապահովել հետազոտության մեխանիզմի գործունեությունը, վերսկսվում են Հանձնաժողովի կողմից՝ այդ անդամ պետության կողմից հետազոտության մեխանիզմի գործունեության ապահովումը հաստատելուց և անդամ պետություններին այդ մասին ծանուցելուց հետո:

4. Հանձնաժողովի կողմից հետազոտության մեխանիզմի գործունեությունը չապահովելու փաստը արձանագրվելուց հետո, սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան տեղեկությունների կանոնավոր ուղարկումը և սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան տեղեկությունների տրամադրումը կասեցնելու ժամանակահատվածում տեղեկությունների ուղարկումը (տրամադրումը) կասեցրած անդամ պետություններն իրավունք ունեն, իրենց օրենսդրությանը համապատասխան, լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու հետազոտության ենթակա ապրանքների հետազոտության ապահովման համար, որոնք այդ անդամ պետությունների տարածքներ են տեղափոխվում այն անդամ պետության տարածքից, որին տեղեկությունների ուղարկումը կասեցվել է:

Այդպիսի միջոցների պահպանումը պարտադիր պայման է այդ միջոցները ձեռնարկած անդամ պետության տարածք հետազոտության ենթակա ապրանքների տեղափոխման համար:

Մինչև Հանձնաժողովի կողմից անդամ պետության կողմից հետազոտության մեխանիզմի գործունեությունը չապահովելու փաստն արձանագրվելը այլ անդամ պետություններն իրավունք չունեն ձեռնարկելու սույն կետում նշված լրացուցիչ միջոցները:

Հոդված 16

1. Անդամ պետությունները, իրենց օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունեն հետազոտելիության ազգային համակարգում կիրառելու սույն Համաձայնագրով չնախատեսված, բայց դրան չհակասող առանձնահատկություններ:

2. Անդամ պետությունները, իրենց օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունեն իրենց տարածքում օգտագործելու սույն Համաձայնագրին համապատասխան ստեղծված և գործող՝ հետազոտելիության ազգային համակարգ այն ապրանքների համար, որոնք ենթակա չեն հետազոտելիության սույն Համաձայնագրին համապատասխան, և որոնց շրջանառությունն իրականացվում է այդ անդամ պետության տարածքում, ինչպես նաև՝ այդ ապրանքների շրջանառության հետ կապված գործառնությունների համար:

Սույն Համաձայնագրին համապատասխան ստեղծված և գործող՝ հետազոտելիության ազգային համակարգի այդպիսի օգտագործումը չի կարող հիմք դառնալ այլ անդամ պետությունների տարածքներում նշված ապրանքների շրջանառության մասին տեղեկությունների տրամադրում պահանջելու համար:

3. Սույն Համաձայնագրի կիրառումը չի խոչընդոտում անդամ պետություններում այն ապրանքների, այդ թվում՝ սույն Համաձայնագրին համապատասխան՝ հետազոտելիության ենթակա այն ապրանքների մասին տեղեկությունների հավաքման, հաշվառման և պահպանման՝ անդամ պետություններում ներդրված և օգտագործվող այլ համակարգերի գործունեությունը, որոնց նկատմամբ, Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրության համապատասխան, կիրառվում են այլ պահանջներ կամ պարտավորություններ:

Հոդված 17

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում Հանձնաժողովը սահմանում է.

1) ուղեկցող փաստաթղթի եզակի նույնականացմանը ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրա գրանցման համարի կառուցվածքը.

2) սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան սահմանված՝ անդամ պետությունների պետական իշխանության մարմինների և (կամ) կազմակերպությունների և Հանձնաժողովի փոխգործակցության կարգը, ինչպես նաև

անդամ պետությունների պետական իշխանության նշված մարմինների, կազմակերպությունների և Հանձնաժողովի կողմից սույն Համաձայնագրի կատարումը վերահսկելու նպատակով փոխանցվող տեղեկատվության կառուցվածքին և ձևաչափին ներկայացվող պահանջները.

3) ընդհանուր գործընթացների իրականացման կանոններն ու տեխնոլոգիական փաստաթղթերը, որոնցով կանոնակարգվում է հետազոծելիության մեխանիզմը Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրականացնելիս:

2. Այն դեպքում, եթե Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսվեն անդամ պետությունների կողմից էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի փոխանակում և փոխադարձ ճանաչում, ապա Հանձնաժողովի կողմից կարող են փոփոխություններ կատարվել հետազոծելիության մեխանիզմն ապահովող տեխնոլոգիական փաստաթղթերում՝ Միության շրջանակներում տեղեկատվության հավաքման և փոխանցման գործընթացների կրկնօրինակումից խուսափելու համար:

Հոդված 18

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 19

Սույն Համաձայնագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

Հոդված 20

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 21

Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր և կազմում է Միության իրավունքի մաս:

Հողված 22

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից:

Կատարված է Նուր-Սուլթան քաղաքում 2019 թվականի մայիսի 29-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	Բելառուսի Հանրապետության կողմից՝	Ղազախստանի Հանրապետության կողմից՝	Ղրղզստանի Հանրապետության կողմից՝	Ռուսաստանի Դաշնության կողմից՝
--	--	---	--	-------------------------------------

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի մայիսի 29-ին Նուր Սուլթանում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն